ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԾԻԱԾԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

1134, Արմավիրի մարզ, գյուղ Ծիածան, հեռ. 093 55-75-42

№ 16
«22» « ապրիլի » 2013 թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն Ղահրամանյան

ԿԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ Է ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 16-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ:

ԱՌԴԻՐ «7» ԹԵՐԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Խ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մտից թիվ 3707-13
«22» 04 2013 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
Ծիածանի գյուղական համայնքի ավագանու
ՈՐՈՇՈՒՄ

16. ապրիլի 2013 թվական թիվ 3

ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի՝ 12-րդ հոդվածի 4 մասով համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածանի գյուղական համայնքի ավագանու 2013 թվականի ապրիլի 16-ի թիվ 2 նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	կողմ	դեմ	ձեռնպահ
1. Ա. ԱԲԳԱՐՅԱՆ	---ստորագրություն	---ստորագրություն	---ստորագրություն
2. Ե.ԳԱՍՊԱՐՅԱՆ	---ստորագրություն	---ստորագրություն	---ստորագրություն
3. Ն. ԳԵՎՈՐԳՅԱՆ	---ստորագրություն	---ստորագրություն	---ստորագրություն
4. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	---ստորագրություն	---ստորագրություն	---ստորագրություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ.ԳԵՎՈՐԳՅԱՆ

2013 թ. ապրիլի 16
գ. Ծիածան

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Ծիածանի
գյուղական համայնքի ավագանու
2013 թվականի ապրիլի 16-ի
թիվ 2 նիստի N 3 որոշման

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ի Մ

1. ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԾԻԱԾԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի N 22-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ՝ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
Ծիածանի գյուղական համայնքի ավագանու
ՈՐՈՇՈՒՄ

16. ապրիլի 2013 թվական թիվ 4 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ԾԻԱԾԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 23-Ի N 22-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 -րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-11 հոդվածներով, «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածանի գյուղական համայնքի վարչական տարածքում 2013 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածանի գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի նոյեմբերի 23- ի «Ծիածանի գյուղական համայնքի վարչական տարածքում տեղական տուրքերի ու վճարների տեսակներն ու դրույքաչափերը հաստատելու մասին» N 22-Ն որոշումը :
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	կողմ	դեմ	ձեռնպահ
1. Ա. ԱԲԳԱՐՅԱՆ	---ստորագրություն	---ստորագրություն	ստորագրություն
2. Ե.ԳԱՍՊԱՐՅԱՆ	---ստորագրություն	ստորագրություն	---ստորագրություն
3. Ն. ԳԵՎՈՐԳՅԱՆ	---ստորագրություն	ստորագրություն	ստորագրություն
4. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	ստորագրություն	ստորագրություն	---ստորագրություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ի. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2013 թ. ապրիլի 16
գ. Ծիածան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Ծիածանի գյուղական
համայնքի ավագանու2013 թվականի
ապրիլի 16-ի թիվ 2 նիստի N 4-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

1) հիմնական օբյեկտների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ յոթ հազար հինգ հարյուր դրամ.

բ. սույն ենթակետի «ա» պարբերությունով չնախատեսված օբյեկտների համար՝

բա. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ տասնհինգ հազար դրամ,

բբ. 501-ից մինչև 1 000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ,

բգ. 1 001-ից մինչև 3 000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ.

բդ. 3 001-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ հիսուն հազար դրամ:

2) ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

ա. մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ,

բ. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ երկու հազար հինգ հարյուր դրամ:

2. Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման վերականգնման, արդիականացման, աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ մեկ հազար հինգ հարյուր դրամ.

2) բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի 1-ին ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է երկու հազար հինգ հարյուր դրամ:

4. Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար հինգ հազար դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար հինգ հազար դրամ:

5. Համայնքի տարածքում՝

1) բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

2) հեղուկ վառելիքի, սեղմված բնական և հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հարյուր հիսուն հազար դրամ:

3) խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է երեսուն հազար դրամ.

4) հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում՝ հինգ հազար դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում մեկ հազար:

6. Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար հիսուն հազար դրամ:

7. Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար քսանհինգ հազար դրամ.

2) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար հիսուն հազար դրամ.

3) բաղնիքների (սաունաների) համար երկու հարյուր հազար դրամ.

4) խաղատների կազմակերպման համար հինգ հարյուր հազար դրամ.

5) շահումով խաղերի կազմակերպման համար երկու հարյուր հազար դրամ.

6) վիճակախաղերի կազմակերպման համար մեկ հարյուր հազար դրամ:

8. Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ.

2) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ երեք հազար դրամ.

3) այլ արտաքին գովազդի համար՝ մեկ հազար դրամ.

4) դատարկ գովազդային վահանակների համար՝ յոթ հարյուր դրամ:

9. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է մեկ հազար դրամ:

10. Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է հիսուն հազար դրամ:

11. Համայնքի տարածքում մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է տաս հազար դրամ:

12. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ:

13. Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցներից վճար՝ տաս հազար դրամ:

14. Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ հինգ հազար դրամ:

15. Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար՝ ըստ հասցեի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական վճար՝ հարյուր դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
Ծիածանի գյուղական համայնքի ավագանու
ՈՐՈՇՈՒՄ

16. ապրիլի 2013 թվական թիվ 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ՝ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 69-րդ հոդվածի 1- ին մասով համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ծիածանի գյուղական համայնքի ղեկավարի հաղորդումը 2013 թվականի բյուջեի կատարման ընթացքի մասին՝ առաջին եռամսյակի համար համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

	կողմ	դեմ	ձեռնպահ
1. Ա. ԱԲԳԱՐՅԱՆ	ստորագրություն	ստորագրություն	ստորագրություն
2. Ե.ԳԱՍՊԱՐՅԱՆ	ստորագրություն	ստորագրություն	ստորագրություն
3. Ն. ԳԵՎՈՐԳՅԱՆ	ստորագրություն	ստորագրություն	ստորագրություն
4. Ա. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	ստորագրություն	ստորագրություն	ստորագրություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Խ. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2013 թ. ապրիլի 16
գ. Ծիածան

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի Ծիածան համայնքի
ավագանու 2013 թվականի ապրիլի 16-ի
թիվ 2 նիստի 5 որոշման

ՀԱՂՈՐԴՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԾԻԱԾԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ

ԵԿԱՄՈՒՏՆԵՐ՝

1. Հողի հարկ –	1.209.0 հազ.դ. դիմաց—	238.2հազ.դրամ
2. Վարձակալական հողի հարկ	22.1---	
3. գույքահարկ/փոխադրամիջ/ -	300.0 --	77.0
4. գույքահարկ /շենք,շին/	100.0 --	0.3
5. դոտացիա	3465.7—	3465.4
6. տեղական տուրքեր	47.5 ---	
7. տեղական վճարներ	250.0 ---	

ԾԱԽՍԵՐ՝

01-1-1		
1./ 4111/ աշխատակազմի աշխատավարձ --	2.837.2 հազ.դ ---	2.619.9 հազ.դ
2./4112/ խրախուսանք	150.0 –	
3. /4214/ կապի ծառայություն	56.2. –	37.6
4. /4212/ էլ. էներգիա	500.0 ---	337.0
5. /4216/ գույքի և սարքավ.վարձակալում	105.0.---	
6. /4234/ տեղեկատվական թերթ	20.0 —	
7. /4237/ ներկայացուցչական ծառայություն	50.0.—	
8 /4239/ ընդհանուր բնույթի այլ	50.0 —	
9. /4261/ գրասենյակային նյութեր	62.5 —	
10. /5122/ վարչական սարքավորումներ	100.0 —	
11. /5121/տրանսպորտային սարքավորումներ	250.0 --	
01.3.3		
12. /4232/ համակարգչային ծառայություն	7.5 ---	30.0
01.6.1		
13. /4251/ընթացիկ նորոգում և պահպանում	175.0 –	
14. /4819/ համայնքային ասոցացիա	3.4 —	
05.1.1		
15. /4213/ աղբաթափություն	240.0 –	160.0
06.3.1		
16 /4213/ խմելու ջրի ջրամատակարարում	30.0 —	
08.2.1		
17. /5132/ գրադարան	20.0 –	
08.2.3		
18 /4241/ մշակույթի տներ –	375.0--	
08.2.4		
19 /4239/ երիտասարդական ծրագիր	200.0 --	
10.7.1		
20 ./4729/ սոց. օգնություն	250.0 –	
21./4819/ նվիրատվություն այլ կազմակերպություն	50.0—	
22/4891/ պահուստային ֆոնդ	370.0--	